

կոսք հակառակ սմին, Մելքիսեդ անուն գաղա-
 նաբարու եւ Աւետիս անուն . . . »: 2. ԳԼ. ԺԳ.
 Կ'ըսէ՝ թէ 1605ին Էջմիածնի Աթոռոյ վրայ
 կային երեք կաթողիկոս, Դաւիթ, Մելքիսեդեկ
 եւ Աւետիս, որուն համար կը յաւելու, թէ
 «սա պարկեշտագոյն էր եւ բան վարդապետու-
 թեան ունէր ի վերայ նոցա»: 3. (Էջ 234)
 «Եւ Աւետիսն, որ էր ընկեր սոցին, նա՛ թէպէտ
 որ էր անկարգութեամբ եւ հակառակ կա-
 թողիկոս, բայց պարկեշտ էր եւ սրբասէր, եւ
 ունէր բան վարդապետութեան, խրատիչ եւ
 ուսուցող, որ ամենայն վարդապետք եւ իմաս-
 տունք յեպիսկոպոսաց, ի քահանայից եւ ի ժո-
 ղովրդոց զնա պատուով ունէին քան զերկոսին,
 որ անհամբ էին որպէս զաղք անպիտանք . . .
 այլ սա վասն պարկեշտութեանն փառաւորէր
 յաչս ամենեցուն եւ զսա տարեալ խօճաներն
 ամենեցուն միաբանութեամբ ի սուրբ քաղաքս
 յերուսաղէմ եւ օրհնել ետուն զԳրիգոր Եպիս-
 կոպոսն, որ Է, Ը, տարի աբեղայ գոլով առա-
 ջնորդութիւն առնէր սրբոյն Յակոբայ մեծա-
 հռչակ վանացն Հայոց»: Հարունակելով այս
 դէպքին նկարագրութիւնը (էջ 264), Կ'ըսէ
 թէ վանեցի եւ Բաղիշեցի տօլվաթաւորները եւ
 Զուղայեցի վաճառականներ, Բարսեղ, Մար-
 տիրոս եւ Կարապետ վարդապետներու յորդոր-
 ներով եւ Պարոնտէր Գրիգորի ջանքերով մեծ
 գումարներ կը հանգանակեն եւ երթալով Ե-
 րուսաղէմ, վանքին պարտքը կը վճարեն: «Գետ
 այսորիկ, Կ'ըսէ պատմիչը, ամենեցուն միաբա-